

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

22.01.2014թ.

Արմավիրի մարզի Դաշտ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու և տեղական ժողովրդավարությունն ամրապնդելու նպատակով, 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբեր այ ներկայացնում եմ հաշվետվություն Դաշտի գյուղական համայնքի բնակչությանը: Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքն ունի մոտ 1050 բնակիչ՝ այդ թվում նաև ժամանակավոր բնակվող անձինք, որոնցից հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ ոչ գյուղատնտեսական աշխատանքով՝ բնակչության մոտ 10%:

Հաշվետու տարում ծնվել է 8 երեխա:

Համայնքը գազաֆիկացված է մոտ 90%-ով, իսկ մնացած 10%-ի համար այժմ կազմվում է նախագիծ առաջիկայում ամբողջովին գազաֆիկացնելու համար: Ոռոգման ջրի մատակարարման հետ կապված կան որոշակի դժվարություններ: Խմելու ջրի ջրամատակարարումը շուրջօրյա է:

Բյուջեի եկամուտների վարչական մաս.

	2013թ.վլան	Փաստացի	Կատարող.
1. հողի հարկ`	2 546.4 հղ.	- 2 502.5հղ.	- 98.3% -ով,
2. գույքահարկ`	671.6հղ.	- 745.2հղ.	- 111 % -ով,
3. վարձակալական հողի հարկ	150.0հղ.	- 156.4հղ.	- 104.3 % -ով,
4. տեղական տուրք	262.0 հղ.	- 241.5հղ.	- 92.2% -ով,
Ընդամենը` սեփ. եկամուտները	3 645.0հղ.	- 3 645.6հղ.	- 100.0% -ով,
Դոտացիա	12 136.9հղ.	- 12 136.9հղ.	- 100.0% -ով,
Սուբվենցիա`	402.0հղ.	- 402.0հղ.	- 100.0% -ով,
Եկ. համ.սեփ.համարվող.գույքի օտ.	-----	- 1 299.1հղ.	-----
Տարեսկզբի ազատ մնացորդ`	553.9հղ.	- 553.9հղ.	-----,
Ընդամենը եկամուտներ	16 737.8հղ.	- 18 037.5հղ.	- 107.8 % -ով:

Բյուջեի եկամուտների ֆոնդային մաս.

Ընդամենը ֆոնդային` 1 853.0հղ.:

Ներկայիս աշխատակազմին վճարվել է աշխատավարձ	---	10 983.8հղ.:
--- Տրամադրվել է սոց.օգնություն`	---	1 300.0հղ.,
--- տեղեկատվական ծառայութ.	---	120.0հղ.,
--- էլեկրատներգիա	---	436.0հղ.,
--- գրասենյակային ապրանքների ձեռք բերման համար`	---	110.0հղ.,

--- աղբահանության համար	--- 780.0հդ.
--- համակարգչային ծառայություն	--- 48.2հդ.,
--- կապի ծառայություն	--- 114.9հդ.,
--- Կենցաղային նյութեր	--- 100.0հդ.,
--- ներկայացուցչական ծախսեր	--- 240.0հդ.,
--- ընդհանուր բնույթի այլ ծախսեր	--- 60.0հդ.,
--- կապիտալ վերանորոգման ծախսեր	--- 250.0հդ.,
--- շենք, շինութ. ընթացիկ նորոգում/գիշերային լուս./	--- 350.0հդ.,
--- երիտասարդական ծրագր. /միջոցառում/	--- 1 000 .0հդ.,
 Ընդամենը ծախսեր	 --- 15 892.9հդ.:

2013թ. ընթացքում կայացել է ավագանու 7 նիստ:

- Համայնքի ազգաբնակչությանն է տրամադրվել 544հատ տարբեր բովանդակությամբ տեղեկանքներ,
- Մուտք է եղել 138 պաշտոնական գրություն,որոնք քննարկվել են և որոնց ընթացք է տրվել,
- Ելք է եղել 100 պաշտոնական գրություն,
- Մուտք է եղել 40 դիմում,
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 14 որոշում,
- Արձակվել է համայնքի ղեկավարի 12 կարգադրություն:

-- Ամսեկան հաշվետվությունները ժամանակին է ներկայացվել մարզպետարան, սոցիալական ծառայություն և վիճակագրական վարչություն:

-- Կազմակերպել է անասնազխաքանակի հաշվառում և ներկայացվել է վիճակագրական վարչություն, ժամանակին կազմակերպվել է հակահամաճարակային պատվաստումներ:

2013թ-ի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գյուղապետարանը առանձնակի ուշադրություն է դարձրել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Համայնքի 34 ընտանիքի տրամադրվել է 1 300.0 հղ. սոց.օգնություն:

Ընդհանուր առմամբ համայնքի անապահով ընտանիքներին ցուցաբերվել է օգնություն,ինչես նաև չի անտեսվել համայնքում սգո արարողությունները:

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է միջոցառում՝ հյուրասիրությունով:

Մայիսի 1-ին նշվել է աշխատավորների միջազգային օրը:

Չամայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում է գտնվում Արցախյան ազատամարտիկները, իսկ հաղթանակի օրվա կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, հյուրասիրություն և բացօթյա համերգ:

Չամայնքում յուրաքանչյուր ամսվա շաբաթ օրը իրականացվում է աղբահանություն:

Չամայնքի կենտրոնական հրապարակը, որտեղ կան նորատունկ ծառեր և տեղադրված է խաչքարը, պարբերաբար ոռոգվում և խնամվում են գյուղապետարանի աշխատողների կողմից:

Մատչելի գներով ձեռք է բերվել 47 տ. պարարտանյութ, 5860 Լ. դիզ. վառելիք և բաժանվել է բնակիչներին:

Ամռանը՝ Ղաշտ համայնքի ազգաբնակչությունը ըստ տարիքային խմբերի, շրջագայեցին Հայաստանի Հանրապետության տեսարժան վայրերով, իսկ երեկոյան ակտիվ հանգիստը եզրափակեցին խնջույքով, որի համար տրամադրվել է 300.0 հդ. դրամ գումար:

Ղաշտի միջնակարգ դպրոցին սեպտեմբերի 1-ին, գիտելիքի օրվա առթիվ, կազմակերպվել է միջոցառում, որի համար տրամադրվել է 250.0 հդ. դրամ գումար:

Չոկտեմբեր ամսին, ուսուցչի տոնի առթիվ ևս կազմակերպվել է միջոցառում հյուրասիրությունով:

Համայնքում մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդական ծրագրերին, մեծ շուքով նշվում է նորապսակների, մայրության և գեղեցկության և Ամանորի տոնակատարությունները:

Համայնքի միջնակարգ դպրոցի 1-ից մինչև 6-րդ դասարանի աշակերտներին նվիրվել է գրեմական պիտույքներ:

Ամանորյա միջոցառում կազմակերպելու և անցկացնելու համար տրամադրվել է 450.0հդ. դրամ գումար:

Համայնքի կարևոր հիմնախնդիրներից լուծվել է խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգման հարցը:

Աշխատանքները ընթացքի մեջ են, ըստ ժամանակացույցի աշխատանքները կավարտվեն մինչև 2014թվականի օգոստոս ամիսը:

Այժմ էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ Դաշտ համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի կողմից Դաշտի գյուղական համայնքի զարգացման համար:

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

-6-



Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ